

ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԻՆՍՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԸ ՄՈՍԿՒԱՑՈՒՄ

Ստորեւ տալիս ենք մի փոքրիկ յուշ, որի հեղինակը՝ ժիշկ Միֆայել Զալեան՝ մեկն է ուրսունական քականների այն երկտասարդներից, որոնք պատրաստեցին Հ.Յ. Դաշնակցութիւնը։ Մինչ սակայն, իր ընկերակիցների մի մասը շարունակեց գործօն յեղափոխական աշխատանքը, Զալեանը, համալսարանն աւարտելուց յետոյ, իբրեւ բժիշկ հաստատուեց նաւթաշխարհի Բագուում՝ նւիրելով իր մասնագիտութեան, մնալով միաժամանակ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում։ Ապա, տարիներ յետոյ, Բագուից տեղափոխւեց իր ծննդավայրը՝ Գանձակ, ուր գտնուում էր հայ-քրքական ընդհարումների միջոցին։ 1907թ., երբ Հ.Յ. Դաշնակցութեան ծոցում ծնունդ առաւ, այսպէս կոչւած, անջատական շարժումը, Զալեան լոյս ընծայեց մի գրքոյկ, որի մէջ փորձում է վերագնահատութեան ենթարկել Հ. Յ. Դաշնակցութեան անցեալը եւ նոր ուղիներ ցոյց տալ։

Այդ գրքոյկում բժ. Զալեանը գտնում է, որ Պետական Դումայի հաստատումով այլեւս պէտք է վերջ տալ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան Ռուսաստանում։ Քանի որ «Դաշնակցութիւնը հիմնւած է միմիայն տանկահայկական հարցը պաշտպանելու համար», իր դերը Ռուսաստանում աւարտելուց յետոյ, նա նորից պարտաւոր է վերադառնալ դէպի սկզբնական նպատակը։ «Կասել է բոպէն, երբ Դաշնակցութիւնն, գոհ իր գործունէութեան հետեւանքից ռուսահայերի վերաբերմամբ եւ հպարտ այն մասնակցութեամբ, որ նա ունեցաւ կողմնակի կերպով ամբողջ ռուսական շարժման գործում, պարտաւոր է կենտրոնացնել իր ուժերը եւ նոր, աւելի ուժեղ քափով նւիրել իր սկզբնական նպատակին՝ Տանկա-Հայաստանի դատին»։

Տանկահայաստանում էլ, ըստ Զալեանի, Դաշնակցութիւնը պէտք է հիմնովին փոխէ գործունէութեան ձեւը. նկատելով որ զուտ հայկական, ազգային սահմաններում կատարւած աշխատանքը օգուտից աւելի վնաս է քերել հայ ժողովրդին՝ «Դաշնակցութեան մնում է առանց տատանելու, առանց հին սխալը նորից կրկնելու, իսկոյն եւ եք մինչեւ այժմ իր պաշտպանած լոկ «հայկական» դատը դարձնել «Տանկահայաստանի, կամ, աւելի լաւ, ընդհանուր տանկական դատ, այսինքն՝ դատ այն բոլոր ազգերի, որոնք տառապում են տանկական բարբարոս ռեժիմի տակ»։

Բժ. Զալեանը հարցնում է. «Դաշնակցութեան մօտ 20 տարւայ կրակոտ գործունէութեան հետեւանքներն բոլորովին ուրիշ չէին լինի, եթէ սկզբից եւ եք նա ամենալայն եւ համարձակ կեր-

պով ըմբռնէր խնդիրն ու տանկահայերի ինքնավարութեան հարց բարձրացնելու տեղ, ուղղակի գլուխ կանգնէր *ամբողջ Առաջադիւր Ասիայի ազատարար շարժման*։ Զալեանն ինքը համոզւած է, որ լաւ կը լինէր։ Եւ ո՛չ միայն Առաջադիւր Ասիայում, Ռուսաստանում էլ, ամէն տեղ պէտք է որդեգրել միջազգային քաղաքականութիւն։ «Դաշնակցութեան մնում է այժմ մի քայլ եւս անել առաջադիւրութեան նախապարհի վերա եւ դանդաղ *միջազգային* իր գործունէութեան բոլոր տեղերում»։ Պէտք է «համերաշխ, միացած ուժերով ձգտենք մեր շուրջը ցրած բոլոր ստրուկ ազգութիւնների ազատութեան, *ընդհանուր բարօրութեան*, իսկ ինչ վերաջերում է *մեր ազգային* շահերին, նախօրօք չյուզենք նորանց ապագայ վիճակով, որովհետեւ ընդհանուր նպատակին հասնելով՝ մենք բաւականութիւն տւած կը լինենք եւ բոլոր մասնաւոր ազգայնական-անհատական պահանջներին, որովհետեւ մեր օրերում չկայ պետական ազատութիւն առանց այդ պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների օրինաւոր պահանջների իրագործման»։

Իբրեւ եզրափակութիւն, Զալեանը Հ. Յ. Դաշնակցութեան վերապահում է «վերին աստիճանի պատուաւոր», «պատմական» դեր — «մի դեր, որ աւելի բարձր է քան միայն սեփական ազգի շահերին ծառայելը, այն է՝ *լինել առաջնորդող եւ ղեկավարող* Առաջադիւր Ասիայում ապրող բոլոր քշւառ եւ բռնակալական լուծի տակ տառապող ազգերի ազատարար շարժման գործում»։

Համաշխարհային պատերազմի տարիներին բժ. Զալեանը գտնուում էր արտասահմանում եւ 1919թ. Զիցերիայում գրել է այս համառոտ յուշերը։ Նրանք որոշ չափով լրացնում են Քրիստափորի յուշերը («Հայրենիք» տնւ. 1924թ. օգոստոս) եւ արժէքաւոր են մեր պատմութեան նախադաշնակցական շրջանի յուսարանութեան համար։

1920թ. բժ. Զալեանը, ոգեւորւած Հանրապետութեան ստեղծումով, անցաւ Հայաստան եւ իբրեւ Ժիշկ, ստանձնեց հիւանդանոցի ղեկավարութիւնը Զալալ-Օղլում, ուր եւ վախճանեց նոյն տարին։

ԽՄԲ.

„ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ“

ԲԺ. ՄԻՔ. ԶԱԼԵԱՆ

«1882 թւի գարնանային մի առաւօտ, Մոսկւայում, ուսանողական մի փոքրիկ սենեակում, խողովակէ էին հետեւեալ անձինք.

Աբէլեան Ներսէս, Տեխնիկական Ուսումնարանի վերջին տարւայ ուսանող, չամախեցի։